ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.01.2020թ. թիվ 26/26-1/763-2020 գրությամբ «Շիրակֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 21.01.2020թ. թիվ 44 գրության հիման վրա, 23.01.2019թ. թիվ 26/26-1/763-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Շիրակֆուդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Շիրակֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Շիրակֆուդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ դիրքորոշում չի ներկայացրել:

«Շիրակֆուդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/32 ընթացակարգի շրջանակներում 07.02.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.01.2020թ. թիվ 44 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 26.12.2019թ. էլեկտրոնային եղանակով հայտ է ներկայացրել «Շիրակֆուդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2019թ.-ի թիվ 2 որոշմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Շիրակֆուդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես՝ Ընկերության հայտում բացակայել է տնօրեն Անդրանիկ Կարապետյանի կողից Գոհար Քոչարյանին փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին լիազորագիրը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի /հավելված 1.1/ տեխնիկական բնութագիրը լրացված էր սխալ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.01.2020թ. ծանուցել է «Շիրակֆուդ» ՍՊԸ-ին և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 15.01.2020թ. ժամը 11:00-ն շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով 15.01.2020թ. թիվ 3 որոշմամբ մերժել է «Շիրակֆուդ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/32 ընթացակարգի շրջանակներում 07.02.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շիրակֆուդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Շիրակֆուդ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է Ընկերության տնօրեն Անդրանիկ Կարապետյանի կողմից Գոհար Քոչարյանին փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը /լիազորագիրը/:

3. Նույն արձանագրության 2.3-րդ ենթակետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 1.1/ չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը բոլոր չափաբաժիններով լրացված են թերի, իսկ 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը լրացված է սխալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով /մինչև 15.01.2020թ. ժամը 11:00-ն/ կասեցնել նիստը և այդ մասին ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.01.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2020թ. թիվ 26/26-1/763-2020 գրությունը, ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 21.01.2020թ. թիվ 44 գրությունը և կից փաստաթղթերը, «Շիրակֆուդ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2020/32 ընթացակարգի շրջանակներում 05.02.2020թ. ներկայացված դիրքորոշումը՝ կից նյութերով, «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/9» ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, ***իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝***

առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շիրակֆուդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Շիրակֆուդ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է Ընկերության տնօրեն Անդրանիկ Կարապետյանի կողմից Գոհար Քոչարյանին փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը /լիազորագիրը/:

Նույն արձանագրության 2.3-րդ ենթակետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 1.1/ չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը բոլոր չափաբաժիններով լրացված են թերի, իսկ 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը լրացված է սխալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով /մինչև 15.01.2020թ. ժամը 11:00-ն/ կասեցնել նիստը և այդ մասին ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.01.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, ***իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Կարգի վերոնշյալ կետերի համաձայն, մասնակցի հայտում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում, մասնակցին տրվում է ***մեկ աշխատանքային օր ժամկետ***, որի ընթացքում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ տարիներով, ամիսներով կամ ***օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է*** այն օրացուցային տարվա, ամսվա, ***ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից***, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն*** կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Այսպիսով՝ վերը նշված կետերով սահմանվում են ժամկետների հաշվարկման իրավակարգավորումները:

Մինչդեռ, արձանագրում եմ, որ Մասնակցին անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է ***14.01.2020թ. ժամը 11:04-ին***, իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***15.01.2020թ. ժամը 11:00-ին*** տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կագի 41-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ վերջինս չի պահպանել նշված կետով սահմանված ժամկետը, այն է՝ մեկ աշխատանքային օրը, ինչպիսի պայմաններում Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունները սահմանված կարգով և ժամկետներում կատարելու հնարավորությունից:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Շիրակֆուդ» ՍՊԸ-ն «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.01.2020թ. թիվ 26/26-1/763-2020 գրությամբ «Շիրակֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**